Արձնագրություն N 2-2

**<<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 09.09.2021թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Միրզոյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Դ. Շատվերյան |
| | Աշ. Գրիգորյան |
| | Գ. Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլյան |

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ռ. Եղիազարյան

## 1. Մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

<<Բիդեք>> ՍՊԸ

*Հավելված N 1.1-ի մասով*

- 9 և 28 տողերում ներկայացված VC 315 մոդելների համար որպես արտադրող նշված է Вентс, սական դրանք հանդիսանում են РОВЕН-ի արտադրանք:
- 57-59 տողերով արտադրող ընկերության անվանումը Wilo-ի փոխարեն նշված է Vilo:
- 57-58 տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն բավարարում հրավերի պահանջներին:
- 78-րդ տողով պահանջվող սարքավորումը՝ TOPAZ-80՝ նախագծով 12մ3/ժամ հզորությամբ մաքրման կայան է: Ուստի անհրաժեշտ է առաջարկել սարքավորման արտադրող, մոդել և անձնագրային տեխնիկական բնութագիր՝ համապատասխան նախագծի պահանջների:

<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ

**Ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են լիազորություն չունեցող անձի կողմից:**

*Հավելված N 1.1-ի մասով*

- 15, 16, 18, 19 տողերում արտադրողը սյունակում լրացված անվանումները արտադրողների անվանումներ չեն:
- 78-րդ տողով պահանջվող սարքավորումը՝ TOPAZ-80՝ նախագծով 12մ3/ժամ հզորությամբ մաքրման կայան է: Ուստի անհրաժեշտ է առաջարկել սարքավորման արտադրող, մոդել և անձնագրային տեխնիկական բնութագիր՝ համապատասխան նախագծի պահանջների:

*Ծավալաթերթի մասով*

Ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը:

<<Ինտերեվրոս-Արգուս>> ՍՊԸ

*Հավելված N 1.1-ի մասով*

- 15, 16, 18, 19 տողերում արտադրողը սյունակում լրացված անվանումները արտադրողների անվանումներ չեն:

- 78-րդ տողով պահանջվող սարքավորումը՝ TOPAZ-80՝ նախագծով 12մ3/ժամ հզորությամբ մաքրման կայան է: Ուստի անհրաժեշտ է առաջարկել սարքավորման արտադրող, մոդել և անձնագրային տեխնիկական բնութագիր՝ համապատասխան նախագծի պահանջների:

<<Գրիգորյան Շին>> ՍՊԸ

***Հավելված N 1.1-ի մասով***

Ներկայացված չէ Հավելված N 1.1-ը:

<<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ

***Հավելված N 1.1-ի մասով***

Լրացված չէ արտադրողների անվանումները, մոդելները (դրանց առկայության պարագայում) և անձնագրային տեխնիկական բնութագրերը:

***Ծավալաթերթի մասով***

Ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել 1.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 10.09.2021թ ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, մասնակիցների հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում դրանք կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

2. ***Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

(Ա. Միրզոյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 13.09.2021թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Ա. Միրզոյան

Անդամներ՝ ______________________ Դ. Շատվերյան

______________________ Աշ. Գրիգորյան

______________________ Գ. Գաորգյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ն. Նիկոլայան